ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

## ԵՎՐՈՃԱՆԱՊԱՐՀ. ՀԱՆԿԱՐԾԱՀԱՍ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԾԱՆՐ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀ

19 Սայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

### Ու՞ր են տանում ճանապարհները

Դեպի Եվրոպա ճանապարհը տարբեր մարդիկ տարբեր կերպ են ընկալում: «Դառնանք Եվրոպա, որ ավելի բարեկեցիկ ապրենք» մոտեցումը, թերևս, տիրապետողը պիտի լինի եվրոջատագովների մոտ, որը եթե նույնիսկ չի բարձրաձայնվում, ապա առնվազն ներքուստ ենթադրվում է: Իսկ թե ինչպես պիտի այդ բարեկեցությունը մեր «գլխին թափվի» եվրոճանապարհի վերջում, թերևս, քչերս ենք մտորել:

Որ Եվրոպացի համարվելու համար առնվազն պետք է «ապրել» ինչպես եվրոպացի, թերևս քչերը կվիճարկեն: Մենք կարծես արդեն ընկալում ենք նաև, որ եվրոպացու պես ապրելու համար պետք է որդեգրենք խաղի եվրոպական կանոնները և հետևենք այդ կանոններին այնպես, ինչպես դա կաներ միջին վիճակագրական եվրոպացին: Փաստորեն եվրոճանապարհը երկաղուր ճանապարհ է, որտեղ աղուրները միշտ զուգահեռ ու միշտ պարտադիր են:

### Ինչպես տիրանալ քաղցրաբլիթներին

Խաղի եվրոպական կանոնների արմատավորումը մեզանում մեծածավալ ու երկարատև ջանքեր են պահանջելու: Խնդիրն այստեղ ոչ թե իրենց արդյունավետությունն ապացուցած նորմերի մեխանիկական պատճենումն է, այլ դրանց արդյունավետ տեղայնացումը, դրանց իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ հիմքերի ամրապնդումն ու դրանց հանդեպ հասարակական վերաբերմունքի արմատական վերափոխումը: Հետևաբար անցումային այս ողջ գործընթացը մեզանում պահանջելու է լուրջ աշխատանք առնվազն վեց հիմնական ուղղություններով.

1. ադապտացիոն նմանակման ճանապարհով ՀՀ օրենսդրության համապատասխանեցում եվրոպականին,
2. անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակում և ընդունում,
3. նոր օրենսդրության կենսագործունեությունն ապահովող ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանեցում,
4. կադրերի կրթման և վերապատրաստման աշխատանքներ,
5. ողջ գործընթացի ուղղորդում, մոնիտորինգ և կոորդինացում,
6. հասարակական/հոգեբանական վերափոխումներին ուղղված ջանքեր:

Եվրոպական և հայկական օրենսդրությունների մոտարկման տեսանկյունից գործընթացն արդեն զգալիորեն առաջ է գնացել: Գործող եվրոպականին ՀՀ օրենսդրության համապատասխանեցման հարցում մեզ լայն հնարավորություններ ընձեռելու է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) իրագործման գործողությունների ծրագրի և Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագրի մշակումը, դրանց հաստատումը և դրանցով սահմանվող ֆինանսական գործիքների արդյունավետ և նախանձախնդիր մշակումը: Հետևաբար, նշված ճանապարհին, ԳՀՀ ԳՕ-ն կարող է ճիշտ ուղեցույցը դառնալ: ԳՀՀ գործողությունների ծրագրի նախապատրաստման փուլում օրենսդրությունների համեմատման տեսանկյունից ահռելի աշխատանք է կատարված: Օրինակ, միայն բնապահպանության բնագավառի օրենսդրության համեմատական վերլուծության ընթացքում դիտարկվել են ԵՄ օրենսդրության 123 իրավական ակտեր՝ բաղկացած 4508 իրավական նորմերից, որոնցից ՀՀ

օրենսդրությանը համապատասխան են համարվել շուրջ 100 իրավական նորմ, չհամապատասխանող՝ շուրջ 500-ը, իսկ շուրջ 3400 իրավական նորմ էլ պարզապես առկա չէ Հայաստանի օրենսդրական դաշտում: Մի բան պարզ է. այստեղ հսկայական աշխատանք կա անելու:

Կարծիքը, թե մեզ համար ԵՄ-ին ինտեգրվելու գերխնդիրը օրենսդրության համապատասխանեցումն է եվրոպականին, թերի է: Կան բազմաթիվ այլ կարևոր խնդիրներ և դրանց շարքում իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունն է, ինչը եվրոպական իրավական համակարգի կարևորագույն բաղկացուցիչն: Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը նույնպես կարևորագույն խնդիրների շարքում է, որը սակայն չի կարող սահմանափակվել զուտ իշխանության գործադիր մարմինների շրջանակով: Նույն այս խնդիր մեջ իր դերն է խաղում ողջ հասարակության և պատասխանատու մարմինների պաշտոնյաների, այդ թվում նաև՝ դատավորների պատրաստվածության, տեղեկացվածության և կրթվածության խնդիրը:

Օրենսդրության համապատասխանեցում չպետք է նշանակի եվրոպական օրենսդրության մեխանիկական պատճենում: Եթե դրանցում հաշվի չեն առնվելու մեր ինստիտուցիոնալ, կազմակերպական, մենթալիտետային և ռեսուրսային ասպեկտները, դատական համակարգի յուրահատկությունները, ապա այդ ակտերն էլ դատապարտված են՝ դառնալու հռչակագրային փաստաթղթեր: Գուցե այդ դեպքում ավելի լավ է չմշակե՞լ և չզբաղվե՞լ նորմատիվ-իրավական փաստաթղթերի նորացման ու համապատասխանեցման խնդրով, որպեսզի այնուհետև չվարկաբեկել այդ ողջ գործընթացը՝ չհետևելով և չենթարկվելով սահմանված նորմերին:

Եվ վերջին հաշվով այս ամենը պետք է ամբողջականացնել հանրային վերահսկողության և հասարակական մասնակցության մեխանիզմների մշակմամբ և դրանց իրագործման ապահովմամբ: Այս ճանապարհին մենք, փաստորեն, ունենք ոչ միայն իշխանության, պետական մարմինների, այլ նաև հասարակական հատվածի և ողջ հանրության աջակցության ու ներգրավման կարիքը:

**Պատրանքներից անդին**

Եվ այսպես, ո՞րն է, ի վերջո, եվրոպական ճանապարհը: Այն ամենօրյա հետևողական և ծանր աշխատանքի ճանապարհն է, հանրային նպատակադրման, ուժերի արդյունավետ համադրման, նախանձախնդիր ջանադրման ու վերափոխվել ցանկանալու ճանապարհն է: Այո՛, այն նաև ապագա բարեկեցիկ կյանքի ճանապարհն է, որ այսօրվա մեր հետևողականությունից է կախված:

*Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2005թ-ի դեկտեմբերի 20-ին կայացած՝ ԳՀՀ իրագործման գործողությունների ծրագրի «Քնապահպանություն» գլխի քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*

*Քննարկումը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի աջակցությամբ:*